



Փաստ. անվանումը	Բողոքների քննարկման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-01-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Սուրեն Օհանյան
Ստորագրություն	





## **1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանը /այսուհետ՝ Համալսարան/ սույն կարգով սահմանում է լուծում է Համալսարանի ուսանողների կողմից բողոքների ներկայացման, դրանց քննարկման և լուծման կարգը:
- 1.2. Համալսարանը սույն կարգով սահմանված խնդիրների լուծումը իրականացնում է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության հիման վրա:

## **2. Գնահատականների բողոքարկումը.**

- 2.1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկել գրավոր աշխատանքի գնահատականը գրավոր, աշխատանքի անցկացումից 10 օրվա ընթացքում՝ տեղեկացվելուց և աշխատանքի արդյունքը դասախոսի հետ քննարկելուց հետո:
- 2.2. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում է ամբիոնի վարիչին է ներկայացնում բողոքարկման դիմումը:
- 2.3. Բողոքարկված տետրն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.
- 2.3.1. վերանայում և վերագնահատում ամբիոնում կազմված հանձնաժողովի կողմից,
- 2.3.2. անբիոնի վարիչի նախագահությամբ հանձնաժողովը ամբիոնում գրավոր կարծիք է ներկայացնում, քննարկում և հիմնավորում է ուսանողի հետ,
- 2.5. Բողոքարկված տետրը ամբիոնի որոշմամբ կարող է ուղարկվել վերագնահատման երկրորդ անգամ:
- 2.6. Քննարկման գործընթացը ամբիոնում պետք է իրականացվի բողոքարկման պահից սկսած 2 օրվա ընթացքում:
- 2.7 Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությամբ:
- 2.8. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է ուղեգրում:
- 2.9. Բողոքարկման արդյունքում գնահատականը կարող է նաև իջեցվել:

## **3. Ուսանողների այլ բողոքների քննարկումը.**

- 3.1. Ցանկացած այլ հարցով /էլ. թեսթերի, տեխնիկական այլ հարցերի, պրոֆեսորադասախոսական կազմի/ ուսանողների կողմից բողոքներ լինելու դեպքում դրանք քննվում են Համալսարանի ղեկավար կազմի կողմից, ըստ պաշտոնի աստիճանային հերթականության:
- 3.2. Համալսարանի ուսանողների այլ բողոքները /որոնք գնահատականներին չեն վերաբերում / առաջին անգամ քննվում են ամբիոնում:
- 3.3. Այն դեպքում երբ ուսանողը չի համաձայնվում բերված բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ, իրավունք ունի այն բողոքարկել պրոռեկտորին:
- 3.4. Պրոռեկտորի կողմից կայացված որոշումները բողոքարկման ենթակա են ռեկտորին: Ռեկտորի կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: